Երկրորդ ընթերցում
Նախագիծ
Պ-888-29.04.2010,26.01.2011-ՊԻ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի փետրվարի 20-ի ՀՕ-308 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 35-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի երկրորդ նախադասությունը հանել.

2) 1-ին մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-րդ, 1.2-րդ և 1.3-րդ մասերով.

«1.1 Հերթական նստաշրջանն անցկացվում է նստաշրջանի բացման օրվանից սկսած՝ երեք շաբաթը մեկ գումարվող չորսօրյա նիստերի միջոցով, որոնց գումարման օրը, բացառությամբ սույն հոդվածի 1.3-րդ կետով նախատեսված դեպքերի, կարող է Ազգային ժողովի նախագահի առաջարկությամբ՝ Ազգային ժողովի որոշմամբ տեղափոխվել նույն գումարման հերթական նստաշրջանի մեկ այլ երկուշաբթի օր: Եթե տեղափոխված չորսօրյա նիստերի գումարման կամ այլ օրը համընկնում է օրենքով ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրվա հետ, ապա այդ օրը նիստեր չեն անցկացվում:

1.2 Ազգային ժողովի նախագահը կարող է սույն հոդված ի 1.1-րդ կետում նշված առաջարկությամբ Ազգային ժողովի նիստում հանդես գալ մինչև տեղափոխվող չորսօրյա նիստերի գումարման օրը: Չորսորյա նիստերի գումարման օրը տեղափոխելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծը քվեարկվում է Ազգային ժողովի նախագահի առաջարկությունից անմիջապես հետո՝ առանց քննարկման:

1.3 Չորսօրյա նիստերի գումարման օրը չի կարող տեղափոխվել, եթե այդ նիստերի օրակարգի նախագծում ընդգրկվելու է Սահմանադրությամբ քննարկման ժամկետ ունեցող կամ սույն օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետի «գ», «ե» կամ «ը» ենթակետով նախատեսված հարց: Նույն գումարման հերթական նստաշրջանի ընթացքում չորսօրյա նիստերի գումարման օրը կարող է տեղափոխվել ոչ ավելի քան, երկու անգամ:

Տեղափոխված չորսօրյա նիստերի գումարման օրը չի կարող համընկնել՝

ա) հաջորդ չորսօրյա նիստերի գումարման օրվա հետ, եթե այդ նիստերի գումարման օրը նույնպես չի տեղափոխվում կամ տեղափոխված չէ.

բ) մինչև չորսօրյա նիստերի գումարման օրը տեղափոխելու մասին Ազգային ժողովի որոշումն ընդունելը նախաձեռնված արտահերթ կամ հատուկ նիստի գումարման օրվա հետ, եթե այդ նիստը չի նախատեսվում գումարել ժամը 18.30-ից մինչև 24-ը :».

3) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«2. Չորսօրյա նիստերը տեղի են ունենում ժամը 12-ից մինչև 18-ը՝ մեկուկես ժամ տևողությամբ նիստերով: Յուրաքանչյուր նիստից հետո հայտարարվում է կես ժամ ընդմիջում: Նիստերի բոլոր օրերին առաջին ընդմիջման տևողությունը մեկ ժամ է:»:

Հոդված 2. Օրենքի 49-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ «ժե» ենթակետով.

«ժե) Ազգային ժողովի հերթական նստաշրջանի չորսօրյա նիստերի գումարման օրը տեղափոխելու մասին:»:

Հոդված 3. Օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետի «և «ժգ»» բառերը փոխարինել «, «ժգ» և «ժե»» բառերով:

Հոդված 4. Օրենքի 57-րդ հոդվածում՝

1) 3-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.1-րդ մասով՝

«3.1 Հարցեր տալու ընթացքում արտահերթ հարց տալու իրավունք ունի Ազգային ժողովի նախագահը և նիստը վարողը:»:

2) 7-րդ մասը «անգամ» բառից հետո լրացնել «, բացառությամբ սույն հոդվածի 3.1-րդ կետով նախատեսված դեպքի» բառերով:

Հոդված 5. Օրենքի 105-րդ հոդվածը 8-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 9-րդ մասով.

«9. Եթե Վարչապետը կամ Կառավարության անդամն առաջարկում է պատգամավորի կողմից հնչեցված բանավոր հարցին գրավոր պատասխանել, ապա պահպանվում է պատգամավորի՝ սույն հոդվածի 2-րդ կետով սահմանված մեկ բանավոր հարցով դիմելու իրավունքը:»:

Հոդված 6. Օրենքի 112-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ երրորդ պարբերությամբ՝

«Ազգային ժողովի դռնբաց նիստերն ուղիղ եթերով առցանց հեռարձակվում են Ազգային ժողովի ինտերնետային կայքում: Առցանց հեռարձակումն իրականացնում է Աշխատակազմը:».

Հոդված 7. Օրենքի 113-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ մասով՝

«6. Ազգային ժողովի պատգամավորների և Աշխատակազմում պետական ծառայողների գործուղման ծախսերը հաշվարկվում են պետական կառավարման լիազոր մարմնի սահմանած

նորմաներին համապատասխան: Ազգային ժողովի նախագահի կարգադրությամբ Ազգային ժողովի պատգամավորների և Աշխատակազմում պետական ծառայողների գործուղման ծախսերը կարող են հատուցվել համաձայն փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի՝ տվյալ տարվա պետական բյուջեով Ազգային ժողովի պահպանման ծախսերում այդ նպատակի համար նախատեսված միջոցների սահմաններում:»:

Հոդված 8. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Սույն օրենքի 6-րդ հոդվածով նախատեսված՝ Ազգային ժողովի նիստերի առցանց հեռարձակումը սկսվում է իրականացվել ոչ ուշ, քան 2012 թվականի հունվարի 1-ը:»:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Առաջարկության հեղինակը	Հոդվածի համարը	Առաջարկությունը	Հեղինակների եզրակացությունը
Պատգամավոր Դ.Հարությունյան	Օրենքի նախագիծ	Շարադրել նոր խմբագրությամբ	Առաջարկությունն ընդունվել է
Պատգամավոր Վ.Դալլաքյան	1-ին հոդված	«վարչապետը կամ» բառերը հանել	Առաջարկությունը չի ընդունվել՝ տես Սահմանադրության 80-րդ հոդված
		«ներկայացնել» բառից հետո լրացնել «և պատգամավորը համաձայն է այդ առաջարկությանը» բառերով	Առաջարկությունը չի ընդունվել: